ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «04» հունվարի 2023 թ.

ՀՐԱՄԱՆ N 1-Ա

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՀԱՅՏԱՏՈՒ՝ ՄԻՔԱՅԵԼ ԿԱՐԵՆԻ ՍԱՐԳԻՍՋԱՆՅԱՆԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2022 թվականի դեկտեմբերի 1-ին կայացած ՀՀ տարածքում գնահատման գործունեության մասնագիտական որակավորման քննության (այսուհետ՝ Որակավորում) ընթացքում առաջադրված հարցաթերթում առկա սխալների հիմքով հայտատու Միքայել Կարենի Սարգիսջանյանի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ներկայացված դիմում-բողոքը և բողոքի հիման վրա Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 6-Լ կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1 արձանագրությամբ տրված եզրկացությունը՝

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1044-Ն որոշման հավելվածով հաստատված «Գնահատման որակավորման քննությունների անցկացման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի պահանջների համաձայն՝ Որակավորման քննության արդյունքները հայտատուները կարող են գրավոր բողոքարկել հանձնաժողովին՝ առաջադրանքի որևէ հարցադրման կամ դրա պատասխանի ճշտության մասով, որակավորման ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում: Բողոքի հիման վրա հանձնաժողովն արձանագրային որոշմամբ մերժում է բողոքը կամ բավարարում՝ սույն կարգի 36-րդ կետում նշված միավորները (առնվազն 120) հավաքելու դեպքում հայտատուին համարելով որակավորման քննությունը հաղթահարած:

Միաժամանակ Կարգի 47-րդ կետի պահանջների համաձայն բողոքարկման արդյունքում կոմիտեի ղեկավարը, աշխատանքային խմբի եզրակացության հիման վրա, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) հայտատուի որակավորման վերաբերյալ հանձնաժողովի հրապարակած արդյունքն անփոփոխ թողնելու մասին.

2) հայտատուի որակավորման վերաբերյալ հանձնաժողովի հրապարակած արդյունքը փոփոխելու վերաբերյալ.

3) բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ժամկետը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ժամկետներով երկարաձգելու մասին:

Ըստ 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1 արձանագրության հայտատու Միքայել Կարենի Սարգիսջանյանը 2022 թվականի դեկտեմբերի 1-ի որակավորման քննության արդյունքները հրապարակվելուց հետո բողոքարկել է իր կողմից լրացված հարցաշարի պատասխանները:

Աշխատանքային խմբի ուսումնասիրությամբ հայտատուին առաջադրված հարցաշարի 59-րդ հարցի համար ավելացվեց 2 միավոր (հայտատուի հավաքած միավորն է՝ 117), քանի որ խնդրի ձևակերպումը սխալ էր, որի լուծման արդյունքում ստացված անշարժ գույքի ընդհանուր արժեքն ավելի փոքր էր ստացվում, քան խնդրի պահանջում նշված շենքի արժեքն է: Աշխատանքային խումբը անդրադառնալով 69-րդ հարցին պարզեց, որ ներկայացված տվյալները բավարար են խնդրի լուծման համար և համապատասխանում են ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 27-ի N 1355-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերով սահմանված դրույթներին:

Հարցաթերթի 18-րդ հարցին առաջադրված 4 հավանական պատասխաններից ճիշտ պատասխանն է՝ «գնահատման համար օգտագործված փաստաթղթերի ցանկը», իսկ հայտատուի կողմից նշված պատասխանը՝ «լավագույն կամ առավել արդյունավետ օգտագործման վերլուծությունը» համարվում է սխալ պատասխան, քանի որ ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 27-ի N 1355-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 46-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ գնահատման հաշվետվությունը պետք է պարտադիր պարունակի՝ «*լավագույն և առավել արդյունավետ օգտագործման վերլուծությունը*»:

Աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքում հայտատուի հավաքած 117 միավորին ավելացվեց ևս 2 միավոր և եզրակացությամբ հայտատուի որակավորման վերաբերյալ հանձնաժողովի հրապարակած արդյունքը՝ 117 միավորը փոփոխվեց դառնալով 119, որը սակայն բավարար չէ գնահատողի որակավորման վկայական տրամադրելու համար, քանի որ Կարգի 36-րդ կետի համաձայն՝ հայտատուն համարվում է որակավորումն անցած որակավորման քննության առաջադրանքից առնվազն 120 միավոր ստանալու դեպքում:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1044-Ն որոշման հավելվածով հաստատված «Գնահատման որակավորման քննությունների անցկացման կարգ»-ի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Կարգի 36-րդ կետի պահանջները, ինչպես նաև Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 6-Լ կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1 արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ տարածքում գնահատման գործունեության մասնագիտական որակավորման 2022 թվականի դեկտեմբերի 1-ի քննության հայտատու Միքայել Կարենի Սարգիսջանյանի որակավորման ստուգման արդյունքները փոփոխել (միավորների քանակը՝ 119-ը):

2. Մերժել գնահատման գործունեության որակավորման վկայականի տրամադրումը:

3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով:

04.01.2023

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393